




Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ԾԵՄԱՐԱՆԻ 1985—1986 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՇՐԶԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ

Սեպտեմբերի 9-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 10.30-ին, Հայոց Հայրապետի նախագահությամբ տեղի ունեցավ հոգևոր ձեմարանի 1985—1986 ուսումնական տարվա հանդիսավոր բացումը:

ձեմարանի հանդիսությունը ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ձեմարանի դասախոսական կապը, ուսանողությունը և մայրավանքի պաշտոնեությունը:

Հանդիսությունն սկսվեց Վեհափառ Հայրապետի աղոթքով: Այնուհետև հնչեց Սուրբ տական Հայաստանի պետական հիմնը: Ապա ձեմարանի սաները կատարեցին ձեմարանի քայերգը, որից հետո ձեմարանի ծիսագիտության դասախոս Ս. Եղիշե քին. Բաղդամյանը ընթերցեց «Սերմնացանի առակը» (Մատթ. ԺԳ 4—9): Ընթերցումից հետո ձեմարանի սաները, ղեկավարությամբ ձեմարանի եկեղեցական երաժշտության դասախոս Հայկ Ֆրունջյանի, երգեցին «Աշակերտք Քրիստոսի» և «Որք վարդաբեցին» շարականները:

Ե լսարանի ուսանող Ռազմիկ Իսախանյանը ընթերցեց Գրիգոր Նարեկացու «Մատենան ողբերգություն» գրքից Սուրբ Հոգուն ուղղված շնորհաբաշխ աղոթք-աղերսը (Բան ԼԴ):

Հանդիսության բացման խոսքով հանդես եկավ ձեմարանի տեսուչ Ս. Եվսիկ քին. Պետրոսյանը:

«Վեհափառ Տեր,
Գերաշնորհ սրբազան հայրեր,
Հոգեշնորհ և արժանապատիվ հայրեր,
Սիրելի դասախոսներ և սաներ,

Ուղիղ 40 տարի առաջ այս շենքի կամարների տակ հնչեց Ս. Էջմիածնի վերաբացված հոգևոր ձեմարանի առաջին զանգը: Անցան 40 տարիներ: Քիչ հետո կհնչի նոր՝ 40-րդ հոբելյանական տարվա առաջին զանգը:

Բոլորիս հայտնի է, թե ինչ դեր և ինչ նշանակություն ունի հոգևոր ձեմարանը Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի կյանքում: Անցած տարիների ընթացքում կարելի է ասել, որ ձեմարանը բավարար չափով կատարել է իր վրա դրված պարտականությունը՝ հասցնելով զարգացած հոգևորականներ վերապարթոնք ապրող Հայ Եկեղեցու համար:

Գիտակից մարդը կյանքում միշտ ձգտում է ավելիին: Այդ իսկ պատճառով մեկ այսօր չպետք է գոհացնի անցած տարիների ձեմարանի արդյունքի բնական շարունակությունը: Մենք պետք է ձգտենք ավելիին: Այս գիտակցությունը առավել պատասխանատվությամբ է լցնում մեր բոլորի մտքերը, սրտերն ու հոգիները հատկապես այսօր, հոբելյանական տարվա սեմին: Եվ թող բացման այս հանդիսությունը ուխտի պահ լինի մեր բոլորի համար:

Վեհափառ Տեր, համաձայն Հայ Եկեղեցու վարդապետության՝ Ս. Թադեոս և Ս. Բար-

թուղիմենու առաքյալների հաջորդ Հայոց ընդհանրական կաթողիկոսը «իր մեջ ամփոփում է Ս. Հոգու բոլոր շնորհների վեղումը»:

Հետևաբար, ճեմարանի տեսչությունը այս կարևոր պահին հայցում է Ձերդ Սրբության օրհնությունը՝ հոգևոր ճեմարանի տեսչության, դասախոսական կազմի և ուսանողության գործերի հաջողության համար»:

Հոգևոր ճեմարանի բացմանը օրհնության խոսքով հանդես եկավ Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ Տ. Սիոն արքեպ. Մանուկյանը:

«Վեհափառ Տեր, Ձեր արտոնությամբ, պատիվ է ինձի համար հանուն Վեհափառ Հայրապետի և Գերագույն Հոգևոր Խորհրդի և Մայր Աթոռ Սուրբ Եկեղեցու, որդունել հոգեվոր ճեմարանի այս տարվան բացումը: Ես կմտածեի, թե ինչպես մենք ալ Երուսաղեմի մեջ Եղիշե Պատրիարք Դուրյանի և Թորգոմ Պատրիարքի շրջանին կսկսեինք ուսումնական տարին, աղոթքով և ուխտով: Եվ ես վստահ եմ, թե հոգևոր ճեմարանի տեսչությունը, ուսուցիչներու կազմը և ուսանողությունը մեծապես գիտակից են այն մեծ Տեսիլքին և նպատակին, որուն նվիրված է այս հաստատությունը: Հոգևոր ճեմարանը շատ մեծ, շատ կենսական դեր ունի կատարելիք մեր Եկեղեցվո կյանքին մեջ: Այսօր իրականությունը, երբ նկատի ունենանք ամբողջ Հայ Եկեղեցին ի հայրենիս: և արտասահման, երեք հոգևոր ճեմարաններ միայն ունի, և ադռնց ուսանողության թիվը՝ 150-են ավելի չըլլար: Եվ արդարև, Ավետարանին պատգամին համաձայն «Հունձք բազումք են և մշակք սակաւք»: Հայ ժողովուրդը կարոտ է հոգևոր խոսքի՝ Հայ Եկեղեցվո պատգամին և մեր հայրերու ժառանգության, մեր մշակույթին, ցրված ի սփյուռս աշխարհի: Եվ հոգևոր ճեմարանի նպատակն է, ոչ միայն հոգևոր հովիվներ, այլ նաև հոգևոր առաքյալներ պատրաստել՝ մեր ժողովրդի հոգևոր, բարոյական և ազգային առաջնորդության համար: Արդարև, դուք բախտավոր եք, սիրելի ուսանողներ, որ կվայելեք Մայր Աթոռ, Ս. Էջմիածնի և Վեհափառ Հայրապետի հայրապետական խնամքը, հոգածությունը և սերը: Վեհափառ Հայրապետը հակառակ իր բազմապեղծ վիճակին, հանձն առած է դասավանդել սարկավագներու դասարանին: Եվ

այդ շնորհքին արժեքը պետք է լավ գիտնաք դուք: Եվ այդ բախտը և շնորհքը, որ ձեզի կընծայվի՝ լավ հասկնաք: Արդարև, ձեր ուսուցչական կազմը և տեսչությունը կաշխատին Ավետարանի սերմնացանի առակին պես՝ բարի սերմեր ցանել ձեր մտքին և սրբոյն մեջ:

Կմաղթենք և դուք կգույշ եղեք, որ այդ սերմերը չիյնան ծայրերու վրա և թռչունները չգողնան վանոնք, այլ այդ բարի հոգևոր սերմերը իյնան ձեր մաքուր սիրտին և հոգիին վրա և արդյունք տան: Եվ դուք այս հոգևոր ճեմարանի շնմեն դուրս պիտի ելլեք շրջանավարտ ըլլալով և ուխտելով ծառայելու Հայ Եկեղեցիին և հայ ժողովրդին: Մեր ժողովուրդը մեծ կարիք ունի հոգևոր առաջնորդներու, քարոզիչներու, հոգևոր հովիվներու: Հոգևոր ճեմարանը, սակայն, միայն կրոնական դպրոց մը չէ, որովհետև եկեղեցականը պետք է, որ գիտակից ըլլա բոլոր գիտություններու՝ արվեստի, գրականության, և ոչ միայն մեր ազգային պատմության, մեր Եկեղեցվո, մեր հոգևոր մշակույթին, այլ նաև ժամանակակից հարցերուն և խնդիրներուն: Համակողմանի ընդհանուր ուսում պետք է ստանա հոգևորականը, որպեսզի՝ կարենա ժողովրդի պահանջներուն, հարցերուն գոհացում տալ, և վանոնք առաջնորդել այսօրվա նյութապաշտ աշխարհին մեջ:

Կմաղթեմ, որ դուք իրապես արժեքը գիտնաք և հոգևոր սիրով նվիրվիք ձեր ուսումներուն, և օգտվիք այդ բոլոր բարի խրատներեն և դաստիարակութենեն, զոր ձեզի կջամբեն ձեր ուսուցիչները և դաստիարակները:

Կմաղթեմ, որ Աստված ձեզի առատորեն շնորհք պարգևե, և դուք աճիք-մեծանաք հոգիով և սիրտով, և նվիրվիք Հայ Եկեղեցվո ծառայության և Աստուծո փառքին»:

Ապա հոգևոր ճեմարանի սաները երգեցին «Էջմիածին», «Հայրապետական մաղթանք», «Նորահրաշ» երգերը, որից հետո նորընծա Տ. Երասա արքեպ. Ներսիսյանն ընթերցեց Գևորգյան ճեմարանի առաջին շրջանավարտներից Կարապետ սարկավագ Տեր-Մկրտչյանի խոսքը՝ արտասանած Գևորգ Դ կաթողիկոսի շիրիմի վրա:

Հանդիսությունը վերջացավ Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգած Տերունական աղոթքով: